ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 16.07.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/98

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Միեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.06.2018թ. թիվ 03/26-3/11730-18 գրությամբ «Ասողիկ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 22.06.2018թ. թիվ ԴՎԱ/2940 գրության հիման վրա, 27.06.2018թ. թիվ 03/26-3/11730-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին, խնդրելով նախաձեռնել «Ասողիկ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Ասողիկ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Ասողիկ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Ընկերություն) ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը հայտ է ներկայացրել ՀՀ պաշտպանության նախարարության կողմից հայտարարված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-2/1» ծածկագրով բաց մրցույթին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) և ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է առաջին տեղ զբաղեցնող մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-2/1» ծածկագրով ընթացակարգի հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը:

ՀՀ պաշտպանության նախարարությանը պատկանող էլեկտրոնային հասցեից ծանուցումը ուղարկվել է Ընկերությանը 31.05.2018թ.:

«Ասողիկ» ՍՊԸ-ն ս.թ. հունիսի 1-ից մինչև հունիսի 4-ը ընկած ժամանակահատվածում բազմիցս փորձել է marketing@asoghik.am էլեկտրոնային հասցեից ՀՀ պաշտպանության նախարարության համապատասխան էլեկտրոնային հասցեին ուղարկել որակավորման փաստաթղթերը սակայն անհասկանալի պատճառներով ուղարկվող նամակները չէին ուղարկվել (գնացել):

Վերոհիշյալ խափանման մասին «Ասողիկ» ՍՊԸ-ն տեղեկացրել է նաև «Նետսիս» ՀՁ ՍՊԸ-ին, որը հանդիսանում է «Ասողիկ» ՍՊԸ-ի ինտերնետ սպասարկողը, որի կողմից մատուցվում են մի քանի ծառայություններ՝ այդ թվում նաև marketing@asoghik.am էլեկտրոնային հասցեի սպասարկումը (դոմեյնի սպասարկում):

Չհասկանալով, թե առաջացած խնդիրը ՀՀ պաշտպանության նախարարության էլեկտրոնային հասցեից է, թե Ընկերության էլեկտրոնային հասցեից՝ «Ասողիկ» ՍՊԸ-ն օրենքով սահմանված ժամկետը բաց չթողնելու նպատակով ստիպված Ընկերության աշխատակցի անձնական էլեկտրոնային հասցեից (gevorgyan.armen@list.ru) 04.06.2018թ. (սահմանված ժամկետում) մրցույթի գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային հասցեին է ուղարկել պահանջված որակավորման փաստաթղթերը՝ նշելով

նաև պատճառը, որի հետևանքով որակավորման փաստաթղթերը ուղարկվել է gevorgyan.armen@list.ru էլեկտրոնային հասցեից:

Այնուհետև ճշտելով, որ որակավորման չափանիշներին իրենց համապատասխանությունը հավաստող փաստաթղթերը ՀՀ պաշտպանության նախարարությանը չի հասել (կամ պատվիրատուի կողմից դրանք չեն ուսումնասիրվել՝ անհայտ էլեկտրոնային հասցեից ստացված լինելու պատճառով), ուղարկվել է նաև marketing@asoghik.am էլեկտրոնային հասցեից՝ վերջինիս աշխատանքը կանոնակարգվելուց հետո 06.06.2018թ.:

Սակայն՝ ինչպես հետագայում պարզվել է ՀՀ պաշտպանության նախարարությունը Ընկերության կողմից ներկայացված որակավորման փաստաթղթերը ինչ-ինչ պատճառներով չի գնահատվել, որը արձանագրվել է՝ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-2/1» ծածկագրով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.06.2018թ. ժամը 11:00 նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետով, ըստ որի՝ «Ասողիկ» ՍՊԸ-ի կողմից որակավորման փաստաթղթեր ընդհանրապես չեն ներկայացվել և գնահատող հանձնաժողովի որոշմամբ «Ասողիկ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի

«զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Ընկերությունը նշել է, որ վերոհիշյալ նորմերի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ «Ասողիկ» ՍՊԸ-ն կատարել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 4-րդ եթնակետով իր վրա դրված պարտավորությունը, ըստ որի՝ որակավորման փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ համապատասխան ծանուցումը ստանալուց հետո սահմանված 3 աշխատանքային օրվա ընթացքում բաց մրցույթի քարտուղարի էլեկտրոնային հասցեին է ուղարկել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը: Սակայն Ընկերության կամքից անկախ և անհասկանալի պատճառներով՝ միգուցե նույնիսկ տեխնիկական պատճառներով, գնահատող հանձնաժողովը, ըստ երևույթի, չի ստացել ներկայացված փաստաթղթերը և մերժել է «Ասողիկ» ՍՊԸ-ի հայտը:

Ընկերությունը նշել է, որ այս պարագայում առկա չէ Ընկերության կողմից Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջների խախտում, քանզի նշված ենթակետի համաձայն՝ գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը, եթե վերջինս սահմանված ժամկետում ընդհանրապես չի ներկայացրել պահանջված փաստաթղթերը, իսկ տվյալ դեպքում առկա է «Ասողիկ» ՍՊԸ-ի կողմից որակավորման չափանիշներին իր համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերը սահմանված ժամկետում պատվիրատուի համապատասխան էլ. հասցեին ուղարկելու բոլոր ապացույցները:

Ի լրումն վերոնշյալ դիրքորոշման՝ «Ասողիկ» ՍՊԸ-ն 12.07.2018թ. գրությամբ պնդել է ներկայացված դիրքորոշումը:

«Ասողիկ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրել է Ընկերությանը չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ

կետի «ա» ենթակետով նախատեսված գնման գործընթացի շրջանակում ստանձնած որևէ պարտավորության խախտում, և վերջինիս չներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/98 ընթացակարգի շրջանակներում 02.07.2018թ. ժամը 10:35-ին, 06.07.2018թ. ժամը 11:40-ին և 11.07.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 11.07.2018թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը, նշելով, որ «Ասողիկ» ՍՊԸ-ի էլեկտրոնային հասցեից տեխնիկական պատճառներով հնարավոր չէր անհրաժեշտ փաստաթղթերը ուղարկել գնահատող հանձնաժողովի քարտուղարին, այդ պատճառով դրանք սահմանված ժամկետում ուղարկվել են Ընկերության աշխատակցի՝ gevorgyan.armen@list.ru էլեկտրոնային հասցեից:

3. <u>ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 22.06.2018թ. թիվ ԴՎԱ/2940 գրությամբ հայտնել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-2/1» ծածկագրով Ընթացակարգի 9-րդ չափաբաժնի մասով «Ասողիկ» ՍՊԸ-ն գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է 1-ին տեղ զբաղեցնող մասնակից: Սահմանված կարգով վերոնշյալ մասնակցին armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ եղանակով ծանուցվել է երեք (3) աշխատանքային օրվա ընթացքում որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ: Սահմանված ժամկետում «Ասողիկ» ՍՊԸ-ն ընդհանրապես փաստաթղթեր չի ներկայացրել, ուստի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետը, որոշել է մերժել «Ասողիկ» ՍՊԸ-ի հայտը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/98 ընթացակարգի շրջանակներում 02.07.2018թ. ժամը 10:35-ին, 06.07.2018թ. ժամը 11:40-ին և 11.07.2018թ.

ժամը 10:15-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/98 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

ՍՑ-ԱՄ-2018/98 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար սպորտային ունեցվածքի ձեռքբերման համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-2/1» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ասողիկ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.05.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ «Ասողիկ» ՍՊԸ-ն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.05.2018թ. որոշմամբ ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 9-րդ չափաբաժնի մասով, որին ***31.05.2018թ.*** սահմանված կարգով Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցվել է Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ Ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը (ընթացակարգի հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է մասնակցի կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի) ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.06.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Ասողիկ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-2/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված որակավորման փաստաթղթերը ընդհանրապես չեն ներկայացվել:

4. «Ասողիկ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել Ընկերության աշխատակցի «gevorgyan.armen@list.ru» էլեկտրոնային հասցեի համապատասխան էջի արտատպումը, համաձայն որի վերոնշյալ էլ. հասցեից

04.06.2018թ. ժամը 15:27-ին Ընթացակարգի հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի «v.sahakyan@mil.am» էլեկտրոնային հասցեին ուղարկվել են հրավերով նախատեսված փաստաթղթերը՝ նշելով, որ marketing@asoghik.am հասցեից անհասկանալի պատճառներով չի ստացվում փաստաթղթերը ուղարկել, այդ պատճառով դրանք ուղարկվում են «Ասողիկ» ՍՊԸ-ի աշխատակցի էլեկտրոնային հասցեից:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միհր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 27.06.2018թ. թիվ 03/26-3/11730-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 22.06.2018թ. թիվ ԴՎԱ/2940 գրությունը և կից փաստաթղթերը, «Ասողիկ» ՍՊԸ-ի գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների

հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է ապրանքի տեխնիկական բնութագրերը, իսկ հրավերով նախատեսված դեպքերում նաև առաջարկվող ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, ծագման երկիրը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար սպորտային ունեցվածքի ձեռքբերման համար հայտարարվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-2/1» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Ասողիկ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ կետի 3.1 ենթակետով նախատեսվել է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովի քարտուղարի՝ հրավերով նախատեսված էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով հանձնաժողովին է ներկայացնում հրավերի 6-րդ հավելվածով նախատեսված գրությունը, որին կցվում է իր կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի:

Ընկերությունը հայտի թիվ 4 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-2/1» ծածկագրով բաց մրցույթին մասնակցելու նպատակով իր կողմից ներկայացված մասնակցության դիմումում նշված չափաբաժնի (չափաբաժինների) մասով առաջարկվող ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերը համապատասխանում են նույն հրավերի համապատասխան չափաբաժնում (չափաբաժիններում) նշված ապրանքի (ապրանքների) տեխնիկական բնութագրերի պահանջներին:

Նույն հայտարարությամբ Ընկերությունը պարտավորվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-2/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացնել իր կողմից առաջարկվող ապրանքի (ապրանքների)՝ անվանումը, ծագման երկիրը և տեխնիկական բնութագրերը (ապրանքի ամբողջական նկարագիր):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.05.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետի համաձայն՝ «Ասողիկ» ՍՊԸ-ն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 31.05.2018թ. որոշմամբ ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից Ընթացակարգի 9-րդ չափաբաժնի մասով, որին ***31.05.2018թ.*** սահմանված կարգով Armeps համակարգի միջոցով ոչ ավտոմատ ծանուցման եղանակով ծանուցվել է Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ Ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը (ընթացակարգի հրավերի 6-րդ հավելվածով

նախատեսված գրությունը, որին կցվում է մասնակցի կողմից հաստատված՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը՝ համաձայն հավելված N 6.1-ի) ներկայացնելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.06.2018թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ «Ասողիկ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է այն հիմնավորմամբ, որ Ընկերության կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-2/1» ծածկագրով բաց մրցույթի հրավերով սահմանված որակավորման փաստաթղթերը ընդհանրապես չեն ներկայացվել:

«Ասողիկ» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին է ներկայացրել Ընկերության աշխատակցի «gevorgyan.armen@list.ru» էլեկտրոնային հասցեի համապատասխան էջի արտատպումը, համաձայն որի վերոնշյալ էլ. հասցեից ***04.06.2018թ.*** ժամը 15:27-ին Ընթացակարգի հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի «v.sahakyan@mil.am» էլեկտրոնային հասցեին ուղարկվել են հրավերով նախատեսված փաստաթղթերը՝ նշելով, որ marketing@asoghik.am հասցեից անհասկանալի պատճառներով չի ստացվում փաստաթղթերը ուղարկել, այդ պատճառով դրանք ուղարկվում են «Ասողիկ» ՍՊԸ-ի աշխատակցի էլեկտրոնային հասցեից:

Այսպիսով՝ ուսումնասիրելով Ընկերության կողմից ներկայացված «gevorgyan.armen@list.ru» էլեկտրոնային փոստի համապատասխան էջի քաղվածքը, ինչպես նաև նշված էլեկտրոնային փոստի «Ուղարկվածներ» բաժնի համապատասխան էլեկտրոնային նամակը, որը ցուցադրվել էր Ընկերության կողմից, արձանագրում եմ, որ Ընկերությունը «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-2/1» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի քարտուղարի համապատասխան ծանուցումը ստանալուց հետո (31.05.2018թ.) սահմանված ժամկետում՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում ***04.06.2018թ.*** Ընկերության աշխատակցի «gevorgyan.armen@list.ru» էլեկտրոնային հասցեից գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլ. հասցեին է ուղարկել հրավերով սահմանված փաստաթղթերը:

Արձանագրում եմ, որ Ընկերությունը կատարել է Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջները, մասնավորապես առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելուց և համապատասխան ծանուցումն ստանալուց հետո, սահմանված 3 աշխատանքային օրվա

ընթացքում Ընթացակարգի քարտուղարի էլեկտրոնային հասցեին է ուղարկել հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Այսպիսով՝ արձանագրում եմ, որ «Ասողիկ» ՍՊԸ-ի կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-2/1» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում չեն խախտվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի պահանջները, ուստի Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 27.06.2018թ. թիվ 03/26-3/11730-18 գրությամբ «Ասողիկ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00835755) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**